

որին կենդանիք քիչ շատ պաղարին կենդանեաց կր մտանան . վասն զի բաւական ջերմութիւն չեն արտադրեր որ թէթե ցրտերու մէջ իրենց բարեխառնութեան աստիճանը կարենան անփոփոխ պահել : Աստի բարեխառնութեան իջնալը թէպէտ պաղարին կենդանեաց նկատմամբ անտարբեր է , սակայն ասոնց նկատմամբ հակառակն է . անանկ որ եթէ որոշեալ չափէ մը քիչ մ'անդին անցնի կամ քիչ մը երկայն քշէ՝ հետեւանքը մահ կ'ըլլայ : Ծերմութիւն արտադրելու կողմանէ՝ այն տաքարին մատող կենդանիները որ բաց աչքով կը ծնանին և անմիջապէս ծննդենէն ետքը կրնան վազել՝ կերակուրին փնտռել , չափահաս կենդանիներէն շատ քիչ կը տարբերին , քան թէ այն կաթնտու կենդանիները որ գոց աչքով կը ծնանին , կամ թուչունք որ հակթէն ելած ատեննին փետուրով ծածկուած չեն : Աստի օրինակի համար թէ որ շան մը կամ կատուի մը նորածին ձագերը որոշեալ ժամանակ մը իրենց մօրմէն հեռու բռնուին՝ և օդուն ազդեցութեանը ենթակայ , նաև ամառ ատեն՝ մինչև մեռնելու չափ կը պաղին : Դաև տղաք ալ իրենց ծննդեան առջի օրերը շատ աւելի քիչ ջերմութիւն ունին քան թէ իրենց կենաց ուրիշ ատենները . օդուն ազդեցութեամբ իրենց ջերմութեան աստիճանը շատ դիւրաւ կ'իջնայ , անոր համար ալ ցուրտը

շատ վնասակար է իրենց . և այս պատճառիս համար է որ մեռնող տղաքը ձմեռ ատեն աւելի են՝ քան թէ տարւոյն ուրիշ եղանակները :

Հ . Յ . Ի .

Նոր տեսակ բարեգործութիւն մը :

Ա երջերս Գաղղիոյ Կորմանտիագաւառին գեղերէն մէկուն մօտ , պահապան զինուոր մը մինչդեռ գետեզերքը ժուռ կու գար , հեռուէն անորոշ ձայն մը լսեց՝ որ օգնութեան կը կանչէր : Շուտ մը հոն վազեց ու տեսնելով որ եղկելոյն մէկը ջրին մէջ յուսահատ կը տապալտրկէր՝ մէկէն նոյն վայրկենին ջուրը նետուեցաւ ու կրցաւ զինքը մահուան վտանգէն խալըսել : Երբ արդէն զինուորին իր խորին երախտագիտութիւնը յայտնել ՚ի նշան այդ բարեգործութեան , միւսը « Ի՛նչ բարեգործութի՛ , ըսաւ հեզնական կերպով մը . իրաւ ես զքեզ խալըսեցի ջրէն , բայց որպէս զի զքեզ բռնեմ ու դատաւորներուն տանիմ , որովհետև արգելեալ է հոն ջուր մտնելը » : Իսկ զ՝ մարդը խղճուելէ ազատելէն վերջը , հազիւ կրցաւ տուգանքէ ու բանտարգելութենէ ալ խալըսիլ , հասկըցնելով դատաւորներուն որ իր ձին ջրի տարած ըլլալով՝ դիպուածով մէջն էր ինկած :

ՊՍՏԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Հիւնգերորդ դար .

Ե . Պատկեր . աճ տեսակ 400-499 :

Եպիփան կիպրացի .

- Ա . Բանք յաղագս Պողոսեայ Թագաւորի և Թարգմանութեան Եօթանասնից : — Բ . Բանք յաղագս քարոզութեան առաքելոցն և աշակերտաց Քրիստոսի : — Գ . Բարոյախօսութիւն : — Դ . Ներբողեան ի Ս . Աստուածածինն : — Ե . Ի Թաղումն Տեառն և ի Յովսէփ արիմաթացի : — Զ . Յաղագս երկոտասան ականց որք ի լանջն Ա .

Ելլատիոս կեսարացի .
Իիոնեսիոս Աղեքսանդրացի .

Տիմոթեոս Աղեքսանդրացի .

Թեոփիլոս Աղեքսանդրացի .

Հիպոպոլիտոս Բուստրացի .

Չենոբ Հայրապետ .

Երանոս Հայրապետ .
Երբաղ վարդապետ .

Հարոնի : — Է . Մեկնութիւն արարածոց , կամ բարոյա-
խօսութիւն ի հին և ի նոր կտակի երևելի դէպսն : —
Ը . Մեկնութիւն յառաջաբանաց Սաղմոսացն Դաւթի :
— Թ . Ի Ս . Խաչն աստուածընկալ : — Ժ . Ի տօն խաչ-
վերացին : — ԺԱ . Ի յարութիւն Տեառն : — ԺԲ . Ի
Թաղումն Տեառն : — ԺԳ . Կանոնական բանք : — ԺԴ .
Պարունակաց գիրք : — ԺԵ . Հարցումն Եղիտոսի առ
Եպիփան վասն ամանաց լուսաւորաց : — ԺԶ . Հար-
ցումն Մենանդրի առ Եպիփան : — ԺԷ . Հարցումն
Թէոդոսի առ Եպիփան :

Պատմութիւն վարուց և ներբողեան ի Ս . Բարսեղ :
Ճառք Ե . — Ա . Ի գալուստ փրկչին յԵրուսաղէմ : — Բ . Ի
յարութիւն Տեառն : — Գ . Ի համբարձումն Տեառն : —
Դ . Ի չարչարանսն Քրիստոսի : — Ե . Ի հակաճառէն
Պօղոսի սամոսացոյ հատուածք :

Ա . Պատմութիւն վարուց Ս . Աթանասի իւրոյ նախորդի :
— Բ . Ի Տեառն ընդառաջն : — Գ . Ի Ս . Կոյսն և յող-
ջոյն Եղիսաբեթի :

Ճառք . — Ա . Ի ծնունդն Քրիստոսի : — Բ . Ի յարութիւն
Ղազարու : — Գ . Ի Թղենին և յԱղամ , վասն ապաշ-
խարութեան : — Դ . Ի միւսանգամ գալուստն Քրիս-
տոսի , և վասն ապաշխարութեան : — Ե . Ի քառասուն
մանկունսն Սեբաստիոյ : — Զ . Ի Թաղումն Տեառն
(դոյզն ինչ հատուած մնացեալ) : — Է . Ի Թաղումն և
ի յարութիւն : — Ը . Վասն զղման : — Թ . Վասն
արտասուաց և խոստովանութեան : — Ժ . Վասն միջ-
նոց քառասնորդաց պահոցն : — ԺԱ . Վասն պահոց :
— ԺԲ . Վասն պահոց և ապաշխարութեան :

Հատուածք մեկնութեանց և ճառք ինչ թուով է : Ա . Ի
յարութիւն Տեառն , ի մեկնութենէ երգերգոց : — Բ .
Ի յարութիւն Ղազարու : — Գ . Վասն կատարածի
աշխարհիս : — Դ . Բանք վասն տօնի ծննդեան և
մկրտութեան : — Ե . Վասն կատարածի աշխարհիս
և գալստեան Քրիստոսի : — Զ . Վասն կատարածի
աշխարհիս և գալստեան նեոին և միւսանգամ գա-
լլստեան :

Ա . Վասն մատնութեան Յիսուսի ի Յուդայէ : — Բ . Ի կա-
թողիկէ եկեղեցի , ի խղ սաղմոսէն : — Գ . Ի լուա-
ցումն ոտից աշակերտացն : — Դ . Ի Ս . Մելիտոս : —
Ե . Վասն յիշատակի մարտիրոսաց :

Հատուածք ճառի ի յարութիւն Տեառն :
Յառաջաբանք* և ցանկք Գործոցն առաքելոց և ժգ թղթոցն
Պօղոսի և այլոց կաթողիկեայց :